

կարծես միայն աւերակ ապրած ըլլար: Ու անոր թագաւորները մեզ կը տպաւորեն առասպելով թեւաւոր: Լեւոնները, Հեթումները, Թորոսները մեր օրերու անուններ կը թուին ըլլալ մեզի ու իբր այդ կը խռովեն մեզ: Մեզի մօտիկ: Աւելի ծանօթ: Աւելի փափեթիք, աւելի տխուր: Մաթիկին համար «մի տեսակ սիմվոլ», որ կենդանի էր մինչեւ այսօր: Զգայնութիւններու այս արդիականութիւնը պայմանաւոր է անշուշտ քիչիկ մըն ալ ուշացող փաստերով, որոնք լեռնային Կիլիկիան համբաւի տարին:

Կը գեղչեմ շատ բան ընկեր Մաթիկին տեսութիւններէն, զինքը տանելու համար Ատանայի մօտիկ ագարակ մը, հայապատկան, ուր հազարէ աւելի գործաւորներ մանգաղի համար վարձուեցան իր կարաւանէն: Ի՞նքը: Պիտի աշխատէ՛ր: Լուսցուց գիշերը մեծկակ ախոռի մը մէջ, որ հազար կով կը պատսպարէր ձմրան եղանակին: Առտուն, իր ճիղճ հասակը հոս ալ վտանգէր պիտի զինքը: Ագարակին պետը, հաստ ճոկան մը ձեռքը, հսկայ փորը պատկառանքով տեղաւորած սրունքներէն վեր, արշալոյսէն առաջ, կանգուն էր մեծ դուռին: Հաստատ ու կլոր մարդ, անիկա վարժ էր աշխատանքը դատելու, անողոք սկզբունքներով: Կը պատկանէր նշանաւոր գերդաստանի մը, որուն շառաւիղներէն մէկը այսօր հայութեան Կրեսոսը կը մնայ, քարիւղի եւ ադամանդի ընդարձակ գործունէութիւններով հեղինակած ըլլալուն առաջին հայ հարստութիւնը, մերօրեայ միջազգային միլիոնատէրներու գիծով, պէյը, ագարակի տէրը պետութենէն պատուրւած անձնաւորութիւն էր, ահագին իր քիթը չփելէն, միսի մէջ թաղուած իր նայուածքովը արագ-արագ կը չափէր ելլողները.- հասակ, վիզ, բազուկ, կուրծք, սրունք: Աշխատանքը մարմնամարդ չէ անշուշտ: Բայց կը չափուի նոյն մեթոտներով: Անողոք այդ նայուածքը իսկական սարսափ էր դարիպներուն, Ատանայի դաշտին բառովը՝ Փէլլահներուն, որոնք հայ-քրիստոնեայի հողերը կը նախընտրէին թլփատեալներուն անդաստաններէն: Այս նախասիրութիւնը զանոնք կը մղէր նոյնիսկ զոհողու-